ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №5

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետի գիտխորհրդի նիստի

27 դեկտեմբերի 2017թ.

Նախագահ՝ Մ. Ա. Զաքարյան

Քարտուղար՝ Հ. Ս. Գասպարյան

ՕՐԱԿԱՐԳ

1. 2017-18թթ. ուստարվա I կիսամյակի ուսումնական պարապմունքների ավարտի հետ կապված գործընթացի քննարկում:

/զեկ. Մ. Ա. Զաքարյան/

2. II ընթացիկ քննությունների և ստուգումների և ստուգարքային շրջանի ամփոփում:

/զեկ. Մ. Ա. Զաքարյան/

ԼՍԵՑԻՆ- Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկան, խորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Մ. Ա. Զաքարյանը:

Օրակարգի առաջին հարցի մասին զեկուցումով հանդես եկավ խորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը:

Օրակարգի առաջին հարցի մասին զեկուցումով հանդես եկավ Մ. Ա. Զաքարյանը: Նա ներկայացրեց 2017-18ուս. տարվա I կիսամյակում կատարված աշխատանքները՝ կապված ուսումնական գործընթացի հետ: Ըստ ժամանակացույցի իրականացվել են բոլոր աշխատանքները՝ համապատասխան ուսումնական պրոցեսի ժամանակացույցի: Զեկուցողը ընդգծեց, որ կիսամյակի ընթացքում դասաժամի բացթողում չի եղել:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ք. Վ. Օթարյանը, Գ. Վ. Գուլակյանը, Հ. Ս. Գասպարյանը և ուրիշներ: Նրանք համակարծիք էին ներկայացված նյութին, ընդգծելով, որ ֆակուլտետում իրականացվել է պատշաճ աշխատանք:

Օրակարգի երրորդ հարցի մասին զեկուցումով հանդես եկավ Մ. Ա. Զաքարյանը: Նա ներկայացրեց 2017-18 ուստարվա I կիսամյակի II ընթացիկ քննությունների, ստուգումների և ստուգարքային շրջանի առաջադիմությունը, որը կցվում է արձանագրության տեքստին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա. Վ. Ցուցուլյանը, Ա. Ս. Սիմոնյանը: Նրանք համակարծիք էին զեկուցողին, ներկայացնելով, որ կապված քննաշրջանի անցկացման հետ իրականացվել են ուսումնական պրոցեսի կազմակերպման կարգի պահանջները:

ՈՐՈՇԵՑԻՆ-

1. Հանձնարարել ամբիոններին ժամանակին իրականացնել քննաշրջանի կաազմակերպման հետ կապված աշխատանքները:
2. Հանձնարարել դեկանատին քննաշրջանը անցկացնել համաձայն ժամանակացույցի:

ՆԱԽԱԳԱՀ Մ. Ա. ԶԱՔԱՐՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ. Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ